<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2022թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր և հյուրեր,

Թույլ տվեք ներկայացնել Ներքին աուդիտի 2022թ. հաշվետվությունը:

Տարեկան աշխատանքային ծրագրով Ներքին աուդիտն իրականացրել է մի շարք միջոցառումներ՝

1. Գլխամասային գրասենյակ

- 200 մլն դրամ և ավել գումարի առևտրային վարկերի նպատակային ստուգում, այդ թվում դրանց դիմաց ձևավորված պահուստների արժանահավատության գնահատում:
- 100 մլն դրամ և ավել գումարի հիփոթեքային և սպառողական վարկերի նպատակային ստուգում, այդ թվում դրանց դիմաց ձևավորված պահուստների արժանահավատության գնահատում:
- Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկին տրամադրման կարգի ու պայմանների ուսումնասիրություն:
- Մանրածախ վարկերի փաթեթների ամբողջականության, ինչպես նաև դրանց էլեկտրոնային տվյալների բազայի վարման գործընթացի ստուգում:
- Գրավադրված ոսկյա իրերի բռնագանձման և իրացման գործընթացի ուսումնասիրություն:
- Բանկում կիրառվող կրեդիտավորման պայմանագրերի՝ Սպառողական կրեդիտավորման և Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին ՀՀ օրենքների և ՀՀ ԿԲ կանոնակարգերի պահանջներին համապատասխանության ստուգում:
- Կանոնակարգ 8/05-ի և Կանոնակարգ 8/06-ի պահանջների պահպանման ստուգում:
- Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի (FATCA) պահանջների համապատասխանության ստուգում:
- Յունիբանկի համակարգում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների ստուգում և ներքին հսկողության համակարգի գնահատում:
- Ներքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների լուծման հետստուգման աշխատանքների իրականացում և այլն:

2. Տարածքային ստորաբաժանումներ

Ընդհանուր առմամբ տարվա կտրվածքով համալիր ստուգման են ենթարկվել թվով 12 մասնաճյուղ, 12 մասնաճյուղերում կատարվել են ոսկու գրավով վարկերի նպատակային

ստուգումներ, 49 մասնաճյուղերում կատարվել են դրամարկղային հանգույցների գույքագրումներ, ինչպես նաև 3 բանկոմատների գույքագրումներ:

3. Արտապլանային ստուգումներ

Ներքին աուդիտը տարվա կտրվածքով իրականացրել է նաև արտապլանային աշխատանքներ, մասնավորապես՝

- Գրավով ապահովված բիզնես վարկերի ստացման հայտերի ուսումնասիրման համար միջնորդավճարների գանձման ստուգում:
- Մասնաճյուղերի տարանցիկ հաշիվների ուսումնասիրություն:
- Բանկի կողմից ոչ ցանկալի վարկառուների ցանկի (Black Base) վարման գործընթացի ուսումնասիրություն:
- Մալաթիա մասնաճյուղի կողմից մանրածախ վարկավորման Արտոնյալ գործիքով տրամադրված վարկերի ուսումնասիրություն:
- <Վճարային սահմանաչափը գերազանցելու համար տույժ> սակագնի ուսումնասիրություն:
- <U Gold վերաֆինանսավորում> վարկային գործիքով վարկավորման գործընթացի ուսումնասիրություն:
- Կանխիկացման գործընթացի ուսումնասիրություն:
- Քարտերի տարեկան սպասարկման վճարների գանձման գործընթացի ուսումնասիրություն:
- Բանկ-հաճախորդ համակարգի 2-րդ և հաջորդ տարիների տարեկան սպասարկման սակագնի ավտոմատ գանձման գործընթացի ուսումնասիրություն:
- Մանրածախ վարկերի տրամադրման գործընթացում սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկները համաձայն Կանոնակարգ 8/05-ով սահմանված պահանջների տրամադրման ստուգում:

Արձանագրված խնդիրների վերացման ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- կազմվում է արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիր, նշանակվում են պատասխանատու անձինք / ստորաբաժանումներ և կատարման ժամկետներ՝ 10-90 օր՝ ելնելով ռիսկի աստիճանից, արձանագրված խնդրի բնույթից,

- իրականացվում է արձանագրված խնդիրների վերացման նկատմամբ հետհսկողություն՝ դրանց կրկնությունը բացառելու և Բանկի կառավարման մարմինների որոշումների կատարումը ստուգելու նպատակով:

Ներքին աուդիտի եզրակացությունը
ներքին հսկողության համակարգի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին <Յունիբանկ> ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգի համապատասխանության եզրակացության համար հիմք են հանդիսացել՝

- ✓ Բանկի Ներքին աուդիտի 2022թ. տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում իրականացված վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների ապահովմանն ուղղված միջոցառումները,
- ✓ ընթացիկ վերահսկողության և տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներից դուրս Բանկի Ներքին աուդիտի իրականացրած վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների իրագործմանն ուղղված միջոցառումները,
- ✓ ՀՀ ԿԲ կողմից արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված ձեռնարկված միջոցառումները,
- ✓ արտաքին աուդիտի ստուգման արդյունքների հիման վրա <Նամակ ղեկավարությանը> փաստաթղթով ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները:

Բանկի ներքին հսկողության համակարգում արձանագրված խնդիրները ձեռնարկվող միջոցառումների արդյունքում լուծված են կամ գտնվում են կարգավորման փուլում, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ <Յունիբանկ> ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի տնօրեն
Արթուր Ղուկասով
05.05.2023թ.